զ) Անտառային տնտեսության հարցերով զբաղվում է համանուն վարչությունը, որը ծրագրեր է մշակում և իրականացնում անտառների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության, դրանց արտադրողականության բարձրացման ու խնամքի միջոցառումներ, իրականացնում է անտառային ֆոնդի հաշվառումը, ժամանակավոր օգտագործման է հատկացնում անտառային ֆոնդի տարածքները, իրականացնում է անտառային ֆոնդի տարածքների հրդեհային անվտանգության միջոցառումներ, կազմակերպում է անտառային հրդեհների հայտնաբերման ու կանխման, վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարը, հայտնաբերում և կանխարգելում է ապօրինի հատումների, ծառերի, թփերի, երիտասարդ տնկարկների և անտառային մշակաբույսերի վնասման և ոչնչացման դեպքերը և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ, հեռ.՝ 65-32-52,
Անտառային տնտեսության վարման և վերլուծության բաժնի պետ, հեռ.՝ 65-32-55,
Անտառային տնտեսության զարգացման և քաղաքականության բաժնի պետ, հեռ.՝ 65-32-55:

Անասնաբուժության բնագավառով զբաղվում են անասնաբուժության բաժինը և անասնաբուժության պետական տեսչությունը: Այս ոլորտում Գյուղատնտեսության նախարարությունը կազմակերպում և ղեկավարում է անասնաբուժական ծառայությունը, կազմակերպում և իրականացնում է կենդանիների և թռչունների վարակիչ, մակաբուծային և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը, ախտորոշմանը, բուժմանը եւ վերացմանն ուղղված միջոցառումներ, կանխորոշում եւ գնահատում է երկրում համաճարակային իրավիճակը, ընդունում է անասնաբուժության վերաբերյալ հրահանգներ և նորմատիվ ակտեր, հսկողություն է իրականացնում շրջակա միջավայրի պաշտպանության համար իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից անասնաբուժասանիտարական պահանջների պահպանման նկատմամբ և այլն:

Կոնտակտներ.
Անասնաբուժության բաժնի պետ, հեռ՝.45-09-60,
Անասնաբուժական պետական տեսչության պետ, հեռ.՝ 45-38-41:

է) Գյուղատնտեսական տեխնիկայի ոլորտով զբաղվում է համանուն տեսչությունը, որը ապահովում է Հայաստանի տարածքում տրակտորների, ինքնագնաց շասսիների և տրակտորային կցանքների պետական հաշվառումը և միասնական համարանիշների ապահովումը, դրանց վարման իրավունքի փաստաթղթերի ապահովումը, գյուղտեխնիկայի տեխնիկական վիճակի և անվտանգ շահագործման կանոնների վերահսկումը, գյուղտեխնիկայի տարեկան տեխնիկական զննությունը և այլն:

Կոնտակտներ.
Գյուղատնտեսական տեխնիկայի տեսչության պետ, հեռ.՝ 77-86-28:

Գյուղատնտեսության նախարարության համակարգում գործում են նաև
Գիտության, կրթության և խորհրդատվության վարչություն՝ - **հեռ. 52-93-33,**
Իրավաբանական վարչությունը՝ **հեռ.52-48-60,**
Արտաքին կապերի և մարքետինգի վարչությունը՝ - **հեռ.52-46-10,**
Տնտեսական բաժինը՝ - **52-12-92,**
Սպասարկումների բաժինը՝ **հեռ. 52-02-58,**
Քարտուղարությունը՝ **հեռ. 52-46-41:**
Գյուղատնտեսության նախարարության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ նախարարության **հասարակայնության հետ կապերի բաժնից (հեռ. 52-48-60),** ինչպես նաև նախարարության պաշտոնական վեբ կայքից՝ այցելելով **www.minagro.am** հասցե:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն տեղեկատվական թերթիկը վերաբերվում է գյուղատնտեսության բնագավառում պետության կողմից մատուցվող հանրային ծառայություններին: Այն համառոտ տեղեկատվություն է պարունակում ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործառույթների, ինչպես նաև հեռախոսահամարների վերաբերյալ:

Մայիս, 2005

Գյուղատնտեսության ոլորտում գործառույթներ իրականացնող պետական կառավարման հանրապետական մարմինը ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունն է, որը կոչված է իրականացնելու գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

ՈՐՈՆՔ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գյուղատնտեսության նախարարության նպատակներն ու խնդիրներն են.

ա) ագրոպարենային ոլորտում ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության մշակումը և իրականացումը,

բ) գիտատեխնիկական միասնական քաղաքականության հիման վրա ՀՀ գյուղատնտեսության ներուժի առավելագույնս օգտագործման միջոցով գյուղատնտեսության զարգացման, գյուղատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման ապահովումը,

գ) ագրոպարենային ոլորտում կատարվող գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա ագրարային և ինվեստիցիոն քաղաքականության հիմնադրույթների, հայեցակարգերի, ծրագրերի մշակումն ու իրականացումը, շուկայական հարաբերությունների ձևավորման և համապատասխան ենթակառուցվածքների զարգացման գործընթացին աջակցությունը,

դ) ՀՀ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը:

ՈՐՈՆՔ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Այդ բնագավառները հետևյալն են.

ա) բուսաբուծություն և բույսերի պաշտպանություն,

բ) ագրովերամշակում և սննդամթերքի անվտանգություն,

գ) հողերի օգտագործում և մելիորացիա,

դ) գյուղատնտեսության և գյուղի սոցիալական զարգացման ծրագրավորում,

ե) անասնաբուծություն և տոհմային գործ,

զ) անտառային տնտեսություն,

է) անասնաբուժություն,

ը) գյուղատնտեսական տեխնիկա:

ա) Բուսաբուծություն և բույսերի պաշտպանություն:

Բուսաբուծության և բույսերի պաշտպանության բնագավառով զբաղվում է համանուն վարչությունը, որի հիմնական խնդիրներն են մշակաբույսերի սերմնաբուծության գործին աջակցությունը, նոր սորտերի ստացմանը աջակցելը, գյուղատնտեսական մշակաբույսերի բուսասանիտարական վիճակի ուսումնասիրումը, կարանտին հիվանդությունների և առավել վնասակար օրգանիզմների դեմ պայքարի կազմակերպումը, գյուղատնտեսական մշակաբույսերի բուսասանիտարական վիճակի բարելավումը, էկոլոգիապես մաքուր բերքի ստացումը, շրջակա միջավայրին, բուսական եւ կենդանական աշխարհին սպառնացող վնասի բացառումը և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ, հեռ.`52-34-11,
Այգեգործության զարգացման բաժնի պետ, հեռ.` 52-37-93,
Երկրագործության զարգացման բաժնի պետ, հեռ.` 52-37-90:

բ) Ագրովերամշակման և սննդամթերքի անվտանգության հարցերով զբաղվում է համանուն վարչությունը, որի հիմնական խնդիրներն են գյուղատնտեսական վերամշակող արդյունաբերության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, այդ ոլորտում տեխնոլոգիական քաղաքականության իրականացումը, սննդամթերքի անվտանգության, ինչպես նաև դրա հետ առնչվող սարքավորումների տեխնոլոգիական, անասնաբուժական, բուժսանիտարական և սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման պետական վերահսկողության իրականացումը և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ, հեռ.` 52-02-58,
Ագրովերամշակման աջակցության բաժնի պետ, հեռ.` 52-59-00,
Սննդամթերքի անվտանգության վերահսկողության բաժնի պետ,
հեռ.` 52-59-00:

գ) Հողերի օգտագործման և մելիորացիայի ոլորտով զբաղվում է համանուն վարչությունը, որը իր իրավասությունների սահմաններում իրականացնում է գյուղատնտեսական հողատեսքերի մոնիթորինգ, մշակում է գյուղատնտեսական հողերի մելիորացիայի պետական քաղաքականությունը, կազմում և իրականացնում է համապատասխան ծրագրեր, գյուղատնտեսական հողերի արդյունավետ հողօգտագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում ՀՀ կառավարությանը և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ, հեռ.` 52-58-12,
Հողերի օգտագործման բաժնի պետ,
հեռ.` 52-58-12,
Հողերի մելիորացիայի բաժնի պետ,
հեռ.` 52-58-12:

դ) Գյուղատնտեսության և գյուղի սոցիալական զարգացման ծրագրավորման հարցերով զբաղվում է համանուն վարչությունը, որը աջակցում է գյուղացիական տնտեսությունների վարկավորմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը և կիրառական բնույթի գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը, տարերային աղետների հետևանքով առաջացած վնասների գնահատմանը, աղետի հետևանքների վերացման նպատակով գյուղացիական տնտեսություններին խորհրդատվության մատուցումը և նյութական օժանդակության տրամադրումը և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ, հեռ.` 56-12-35, 52-48-60,
Գյուղատնտեսության զարգացման ծրագրավորման բաժնի պետ, հեռ.` 56-12-35, 52-48-60,
Գյուղի սոցիալական զարգացման և պարենային ապահովության բաժնի պետ, հեռ.` 56-12-35, 52-48-60:

ե) Անասնաբուծության և տոհմային գործի վարչությունը աջակցում է կենդանիների տոհմային գործին և այդ ոլորտում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպմանը, նպաստում է գյուղատնտեսական կենդանիների նոր ցեղերի ստացմանը, բուծմանը և արհեստական սերմնավորմանը և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ, հեռ.` 45-09-60,
Անասնաբուծության բաժնի պետ,
հեռ.` 45-09-60,
Համարակալման և հաշվառման բաժնի պետ,
հեռ.` 45-09-60: